ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1

ք.Երևան «28» «03» 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Սպասարկվող», մի կողմից, և Երևանի քաղաքապետարանի «ԳՇՊՇ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Սպասարկող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սպասարկողը պարտավորվում է Սպասարկվողի հանձնարարությամբ կատարել Երևան քաղաքի Փ.Բյուզանդի 1/3 հասցեի շենքի երրորդ հարկում գտնվող 573.5 (հինգ հարյուր յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով Սպասարկվողին՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալությանը, հանձնված տարածքի սպասարկման Ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն Պանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3. Ծառայությունը մատուցվում է Սպասարկողի ուժերով, նյութերով և միջոցներով:

1.4. Սպասարկողը պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցված Ծառայությունների որակի համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սպասարկվողն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Սպասարկողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Սպասարկողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Սպասարկողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Սպասարկողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Սպասարկողն էականորեն խախտել է պայմանագիրը: Սպասարկողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Սպասարկվողը պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Սպասարկողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Սպասարկողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Սպասարկողն իրավունք ունի՝

2.3.1. Սպասարկվողից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Սպասարկվողի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Սպասարկողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Սպասարկվողին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Սպասարկվողի և Սպասարկողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Սպասարկվողին հանձնելու փաստը ֆիքսվում է Սպասարկվողի և Սպասարկողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Սպասարկողը Սպասարկվողին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Սպասարկվողին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №3):

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Սպասարկվողը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Սպասարկողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Սպասարկվողը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Սպասարկողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Սպասարկվողը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Սպասարկվողը Սպասարկողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Սպասարկողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 720 500 (մեկ միլիոն յոթ հարյուր քսան հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Սպասարկման ծառայությունների գինը 1 մ² համար ամսական կազմում է **250 (երկու հարյուր հիսուն) դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: 573.5 մ² համար սպասարկման վարձը ամսական կազմում է **143 375 (հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր յոթանասունհինգ) դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Սպասարկողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Սպասարկողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Սպասարկվողը նվազեցնելու այդ գինը:

4.1.1. Դեկտեմբեր ամսվա մատուցվելիք ծառայությունների գումարը՝ **143 375 (հարյուր քառասուներեք հազար երեք հարյուր յոթանասունհինգ) դրամ,** որպես կանխավճար տրվում է Սպասարկողին, որը մարվում է մինչև նախատեսվող ծառայությունների ավարտը՝ Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված №2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սպասարկողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Սպասարկողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է հատկացված ֆինանսական միջոցների դեպքում և կնքված համաձայնագրի հիման վրա:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Սպասարկողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Սպասարկողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Սպասարկվողի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Սպասարկվողի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2018 թվականի հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Սպասարկողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Սպասարկողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Սպասարկվողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Սպասարկվողը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Սպասարկողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Սպասարկվողի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Սպասարկողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Սպասարկվողի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության

մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Սպասարկող կամ Սպասարկվող) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Սպասարկողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Սպասարկողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Սպասարկողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Սպասարկվողը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Սպասարկողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ №№ 1-ը; 2-ը, 3-ը և 3.1-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՊԱՍԱՐԿՎՈՂ	ՍՊԱՍԱՐԿՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**Երևանի քաղաքապետարանի «ԳՇՊՇ» ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք. Երևան, Արգիշտի 1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 2470100871840000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02524368
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	Երևանի քաղաքապետարանի «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի տնօրեն
Հ.Հովհաննիսյան	***Ա.Ղազարյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«28» «03» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1» ծածկագրով պայմանագրի

ՊՊԱՍԱՐԿՎՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Տ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՍՊԱՍԱՐԿՈՂ
Երևանի քաղաքապետարանի «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի
տնօրեն
Ա.Նազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գին	ընդհանուր քանակ	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	70331700	**ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից զբաղեցվող շենքային տարածքների սպասարկում** Ա. Սպասարկվող տարածքների ընդհանուր մակերեսը՝ 573.5 (հինգ հարյուր յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր Բ. Սպասարկման ծառայությունները՝ ա) առևտրային սարք հանդիսացող հաշվիչից մինչև սպասարկվողի տարածք ձգվող մալուխի վթարային-վերականգնողական աշխատանքների իրականացում սպասարկվողի նյութերով, բ) ջրամատակարարում և կոյուղու աշխատանքի ապահովում, գ) տարածքի աղբահանություն, դ) ընդհանուր տարածքների պահպանություն, ե) տարածքի պահպանմանն ուղղված ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացում, զ) ընդհանուր օգտագործման տարածքների հակահրդեհային, շինարարատեխնիկական, սանիտարահիգիենիկ նորմերի պահպանում, է) ընդհանուր օգտագործման տարածքների մաքրության և տեխնիկական սպասարկման ապահովում, ը) վերելակների սպասարկում:	դրամ	1 720 500	1	ք.Երևան, Փ.Բուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի երրորդ հարկ	01.01.2018 - 31.12.2018 թթ.

Հավելված №2
«28» «03» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարանի «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի
տնօրեն
Ա.Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	70331700	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից զբաղեցվող շենքային տարածքների սպասարկում	-	-	-	430 125	573 500	716 875	860 250	1 003 625	1 147 000	1290 375	1 433 750	1 720 500	**1 720 500**

Հավելված №3
«28» «03» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1» ծածկագրով պայմանագրի

ՍՊԱՍԱՐԿՎՈՂ	ՍՊԱՍԱՐԿՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	Երևանի քաղաքապետարանի «ԳԾՊԾ» ՓԲԸ
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Արգիշտի 1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 2470100871840000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02524368

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար սպասարկման ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «28» «03» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1
Սպասարկվողը և Սպասարկողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Սպասարկողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք են հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«28» «03» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Սպասարկվողին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Սպասարկվող) և Երևանի քաղաքապետարանի «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Սպասարկող) միջև «28» «03» 2018 թվականին կնքված № ՀՀ-ԲՆ-ԾՁԲ-18/06-1 գնման պայմանագրի շրջանակներում Սպասարկողը «_____» «_____» 2018 թվականին հանձնման-ընդունման նպատակով Սպասարկվողին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն